

ԿՈԴ
050.0246 Ա. 27.09.11

27 սեպտեմբերի 2011 թվականի թիվ 246 Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ
ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ» ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ և 20-րդ հոդվածների դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթին՝ ըստ Հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 372 Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերին սույն որոշման ծանուցման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ**
2011 թ. սեպտեմբերի 29
Երևան

Ներսես Երիցյան

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
դրամավարկային քաղաքականության անուղղակի
գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ**

Բովանդակություն

Ներածություն.....	4
Դրամավարկային քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքները.....	4
Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքները.....	5
1. Հիմնական վերաֆինանսավորման գործիք.....	6
2. Ճշգրտող գործիքներ.....	7
2.1 Ռեպո.....	7
2.2 Հակադարձ ռեպո.....	7
2.3 Արտարժույթի տրամադրման սվոփ.....	8
2.4 Արտարժույթի ներգրավման սվոփ.....	9
2.5 Դրամական միջոցների ներգրավման սակարկություններով գործարք.....	9
3. Կառուցվածքային գործիքներ.....	10
3.1 Երկարաժամկետ վերաֆինանսավորման գործիք.....	10
3.2 Պարտատոմսերի առք.....	10
3.3 Պարտատոմսերի վաճառք.....	11
3.4 Կենտրոնական բանկի պարտատոմսերի թողարկում.....	12
3.5 Արտարժույթի առք.....	12
3.6 Արտարժույթի վաճառք.....	13
4. Մշտական հնարավորության գործիքներ.....	14
4.1 Լոմբարդային Ռեպո.....	14
4.2 Դրամական միջոցների ներգրավում.....	14
Դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառման մեխանիզմները.....	15
Ստանդարտ տենդեր.....	16
Արագ տենդեր.....	16
Մշտական հնարավորության գործիքների կնքման մեխանիզմը.....	17
Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների տոկոսադրույքներ.....	18
Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական շուկային անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում.....	18
Հավելվածներ.....	19
Հավելված 1.....	19
Հավելված 2.....	21
Հավելված 3.....	22
Հավելված 4.....	23
Հավելված 5.....	24
Հավելված 6.....	25

Ներածություն

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու համար Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրեր, որոնց անխափան իրագործման նախապայմաններից է շուկայի մասնակիցների և հանրության կողմից այդ ծրագրերում առաջադրված խնդիրների և դրանց հասնելու համար իրականացվող միջոցառումների միասնական ընկալումը և երկակի մեկնաբանություններ բացառող մեխանիզմների դաշտի առկայությունը:

Դրամավարկային քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքները

Հայաստանի Հանրապետությունում գների կայունության արդյունավետ ապահովման նպատակով 2006 թվականի հունվարից Կենտրոնական բանկն անցում է կատարել գնաճի նպատակադրման ռազմավարության: Վերջինիս ներքո, որպես անվանական խարիսխ և միջանկյալ նպատակ սահմանվել է գնաճի կանխատեսված մակարդակը, իսկ որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ տոկոսադրույքը: Գնաճի ռազմավարության ներքո Կենտրոնական բանկը կանխատեսում է գնաճի ցուցանիշը, այնուհետև իր գործողությունները՝ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառումը, ուղղում է նպատակային ցուցանիշից շեղման վերացմանը: Կենտրոնական բանկը ներկայումս կարևորում է նաև գործառնական նպատակին հասնելու, իրացվելիության մակարդակը կառավարելու և ֆինանսական շուկային անհրաժեշտ ազդակներ հաղորդելու ապահովման խնդիրները, որոնք իրենց արտահայտումն են գտել ներկայացվող դրամավարկային քաղաքականության գործիքակազմում:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով ամրագրված՝ իր հիմնական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովման, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու խնդիրների իրագործման շրջանակներում, Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում հանդես է գալիս որպես վերջին ատյանի վարկատու, ինչպես նաև հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերին (այսուհետև՝ Բանկ) մշտապես ներդնել

ավելցուկային միջոցները՝ շուկայականից համապատասխանաբար ավելի բարձր և ավելի ցածր տոկոսադրույքներով:

Երկարաժամկետ և հեռանկարային նպատակներից ելնելով՝ Կենտրոնական բանկը սահմանված կարգով կարող է նաև փոփոխել Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստավորման նորմը և պահուստավորման մեխանիզմը: Նշված գործիքը հանդես է գալիս որպես բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվ: Նորմատիվի հաշվարկման հիմքում դրված միջինացման մեխանիզմը նպաստում է ֆինանսական շուկայում տոկոսադրույքների կարճաժամկետ կտրուկ տատանումների հարթմանը:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում ազատ մրցակցային հարաբերությունների պահպանումն ու զարգացումը՝ Կենտրոնական բանկն իր գործառնություններն իրականացնում է կիրառելով շուկայական մեխանիզմներ:

Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքները

Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում հանդես է գալիս դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներով, որոնք, ըստ կիրառման նպատակի, բաժանվում են 4 խմբի.

1. **հիմնական վերաֆինանսավորման գործիք**, որը ենթադրում է Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ռեպո գործարքի իրականացում: Գործիքը կիրառվում է կարճաժամկետ իրացվելիության ներարկման նպատակով,
2. **ճշգրտող գործիքներ**, որոնք ենթադրում են Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ռեպո, հակադարձ ռեպո, արտարժույթի տրամադրման և ներգրավման սվոփ, ինչպես նաև դրամական միջոցների ներգրավման սակարկություններով գործարքների իրականացում: Գործիքները նպատակ ունեն ճկուն և օպերատիվ եղանակով հարթելու իրացվելիության և տոկոսադրույքների հնարավոր կարճաժամկետ շեղումները,
3. **կառուցվածքային գործիքներ**, որոնք ենթադրում են Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ երկարաժամկետ վերաֆինանսավորման գործիքի (ռեպո), պարտատոմսերի և արտարժույթի առք/վաճառքի գործարքների իրականացում, ինչպես նաև Կենտրոնական բանկի պարտատոմսերի թողարկում: Գործիքները կիրառվում են կառուցվածքային տեղաշարժերի պարագայում համեմատաբար երկար ժամանակահատվածով շուկայի մասնակիցներին իրացվելիության տրամադրման կամ ներգրավման նպատակով,

4. **մշտական հնարավորության գործիքներ**, որոնք ենթադրում են դրամական միջոցների ներգրավման կամ տրամադրման գործիքների կիրառում՝ առևտրային բանկերի նախաձեռնությամբ: Մշտական հնարավորության գործիքները թույլ են տալիս առևտրային բանկերին ճշգրտել իրացվելիության մեկօրյա անհաշվեկշռվածությունները, իսկ դրանց տոկոսադրույքները հանդիսանում են շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքների վերին և ստորին սահմանները՝ սահմանափակելով կարճաժամկետ տոկոսադրույքների տատանման միջակայքը (տես՝ հավելված 5):

Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառումը հնարավոր է նաև սույն կանոններով չնախատեսված եղանակներով:

1. Հիմնական վերաֆինանսավորման գործիք

- Հիմնական վերաֆինանսավորման գործիք (ռեպո)՝ գործարք, որով Բանկը Կենտրոնական բանկին շուկայական գնով (տես՝ հավելված 1) վաճառում է պարտատոմսեր՝ գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ Կենտրոնական բանկը սեփականության իրավունքով ձեռք է բերում պարտատոմսեր՝ մարման օրը դրանք հետ վաճառելու պարտավորությամբ:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել է համապատասխան համաձայնագիր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի միջոցով:
- Գործարքի առարկա կարող են հանդիսանալ Կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր:
- Գործարքն իրականացվում է, որպես կանոն, 7 օր ժամկետով:
- Գործարքն իրականացվում է ֆիքսված կամ տատանվող տոկոսադրույքով:
- Գործարքի կնքման համար անցկացվող ստանդարտ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, մարման օրը, տոկոսադրույքը, հայտերի ընդունման վերջնաժամկետը:
- Գործարքի կատարման օր է հանդիսանում յուրաքանչյուր չորեքշաբթի օր: Այն դեպքում, երբ չորեքշաբթի օրը աշխատանքային օր չէ, գործարքի կատարման օր է հանդիսանում հաջորդ աշխատանքային օրը:
- Կենտրոնական բանկի կողմից ներարկվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված պահանջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:

- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի ավելացմանը:

2. Ճշգրտող գործիքներ

2.1 Ռեպո

- Ռեպո՝ գործարք, որով Բանկը Կենտրոնական բանկին շուկայական գնով (տես՝ հավելված 1) վաճառում է պարտատոմսեր՝ գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ Կենտրոնական բանկը սեփականության իրավունքով ձեռք է բերում պարտատոմսեր՝ մարման օրը դրանք հետ վաճառելու պարտավորությամբ:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել է համապատասխան համաձայնագիր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի և երկկողմանի բանակցությունների միջոցով:
- Գործարքի առարկա կարող են հանդիսանալ Կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր:
- Գործարքն իրականացվում է, որպես կանոն, մինչև 7 օր ժամկետով:
- Գործարքն իրականացվում է ֆիքսված կամ տատանվող տոկոսադրույքով:
- Գործարքի կնքման համար անցկացվող արագ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, մարման օրը, տոկոսադրույքը, հայտերի ընդունման վերջնաժամկետը:
- Կենտրոնական բանկի կողմից ներարկվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված պահանջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի ավելացմանը:

2.2 Հակադարձ ռեպո

- Հակադարձ ռեպո՝ գործարք, որով Բանկը Կենտրոնական բանկից շուկայական գնով (տես՝ հավելված 1) սեփականության իրավունքով ձեռք է բերում պարտատոմսեր՝ գործարքի մարման օրը դրանք հետ վաճառելու պարտավորությամբ, իսկ Կենտրոնական բանկը վաճառում է պարտատոմսեր՝ դրանք մարման օրը հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել է համապատասխան համաձայնագիր:

- Գործարքն իրականացվում է աճուրդի և երկկողմանի բանակցությունների միջոցով:
- Գործարքի առարկա կարող են հանդիսանալ Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված պարտատոմսեր:
- Գործարքն իրականացվում է որպես կանոն մինչև 28 օր ժամկետով:
- Գործարքն իրականացվում է ֆիքսված կամ տատանվող տոկոսադրույքով:
- Գործարքի կնքման համար անցկացվող արագ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, մարման օրը, տոկոսադրույքը, հայտերի ընդունման վերջնաժամկետը:
- Կենտրոնական բանկի կողմից ներքաշվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված պահանջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի կրճատմանը:

2.3 Արտարժույթի տրամադրման սվոփ

- Արտարժույթի տրամադրման սվոփ՝ գործարք, որի առաջին քայլի ընթացքում Բանկը Կենտրոնական բանկին տրամադրում է անկանխիկ ԱՄՆ դոլար և Կենտրոնական բանկից ներգրավում ՀՀ դրամ, իսկ երկրորդ քայլի ընթացքում նշված միջոցները միևնույն ծավալներով հետ են փոխանակվում:
- Գործարքի երկրորդ քայլի ընթացքում տեղի է ունենում նաև սվոփ տոկոսադրույքի (տես՝ հավելված 3) համապատասխան դրամային գումարի վճարում, որը սվոփ տոկոսադրույքի դրական լինելու դեպքում վճարում է Բանկը Կենտրոնական բանկին, իսկ սվոփ տոկոսադրույքի բացասական լինելու դեպքում՝ Կենտրոնական բանկը Բանկին:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել են համապատասխան համաձայնագրեր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի միջոցով:
- Գործարքն իրականացվում է որպես կանոն մինչև 91 օր ժամկետով:
- Գործարքի կնքման համար անցկացվող արագ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, մարման օրը, սվոփ տոկոսադրույքը, սփոթ փոխարժեքը, հայտերի ընդունման վերջնաժամկետը:
- Կենտրոնական բանկի կողմից ներարկվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված պահանջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:

- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի ավելացմանը:

2.4 Արտարժույթի ներգրավման սվոփ

- Արտարժույթի ներգրավման սվոփ՝ գործարք, որի առաջին քայլի ընթացքում Բանկը Կենտրոնական բանկից ներգրավում է անկանխիկ ԱՄՆ դոլար և Կենտրոնական բանկին տրամադրում ՀՀ դրամ, իսկ երկրորդ քայլի ընթացքում նշված միջոցները միևնույն ծավալներով հետ են փոխանակվում:
- Գործարքի երկրորդ քայլի ընթացքում տեղի է ունենում նաև սվոփ տոկոսադրույքին (տես՝ հավելված 3) համապատասխան դրամային գումարի վճարում, որը սվոփ տոկոսադրույքի դրական լինելու դեպքում վճարում է Կենտրոնական բանկը Բանկին, իսկ սվոփ տոկոսադրույքի բացասական լինելու դեպքում՝ Բանկը Կենտրոնական բանկին:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել են համապատասխան համաձայնագրեր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի միջոցով:
- Գործարքն իրականացվում է որպես կանոն մինչև 91 օր ժամկետով:
- Գործարքի կնքման համար անցկացվող արագ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, մարման օրը, սվոփ տոկոսադրույքը, սփոթ փոխարժեքը, հայտերի ընդունման վերջնաժամկետը:
- Կենտրոնական բանկի կողմից ներքաշվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված պահանջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի կրճատմանը:

2.5 Դրամական միջոցների ներգրավման սակարկություններով գործարք

- Դրամական միջոցների ներգրավման գործարք՝ գործարք, որով Կենտրոնական բանկը Գործարքի կատարման ամսաթվին Բանկից ներգրավում է դրամական միջոցներ՝ Գործարքի մարման ամսաթվին դրանք վերադարձնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել է համապատասխան համաձայնագիր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի միջոցով:
- Գործարքն իրականացվում է որպես կանոն մինչև 28 օր ժամկետով:
- Գործարքն իրականացվում է ֆիքսված կամ տատանվող տոկոսադրույքով:
- Գործարքի կնքման համար անցկացվող արագ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական

պայմանները՝ համարը, տիպը, կնքման ամսաթիվը, կատարման ամսաթիվը, մարման ամսաթիվը, տոկոսադրույքը, հայտերի ընդունման վերջնաժամկետը:

- Կենտրոնական բանկի կողմից ներքաշվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված պահանջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի կրճատմանը:

3. Կառուցվածքային գործիքներ

3.1 Երկարաժամկետ վերաֆինանսավորման գործիք

- Երկարաժամկետ վերաֆինանսավորման գործիք (ռեպո)՝ գործարք, որով Բանկը Կենտրոնական բանկին շուկայական գնով (տես՝ հավելված 1) վաճառում է պարտատոմսեր՝ գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ Կենտրոնական բանկը սեփականության իրավունքով ձեռք է բերում պարտատոմսեր՝ մարման օրը դրանք հետ վաճառելու պարտավորությամբ:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել է համապատասխան համաձայնագիր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի և երկկողմանի բանակցությունների միջոցով:
- Գործարքի առարկա կարող են հանդիսանալ Կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր:
- Գործարքն իրականացվում է որպես կանոն մինչև 91 օր ժամկետով:
- Գործարքն իրականացվում է ֆիքսված կամ տատանվող տոկոսադրույքով:
- Գործարքի կնքման համար անցկացվող ստանդարտ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, մարման օրը, տոկոսադրույքը, հայտերի ընդունման վերջնաժամկետը:
- Կենտրոնական բանկի կողմից ներարկվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված պահանջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի ավելացմանը:

3.2 Պարտավորումների առք

- Պարտատոմսերի առք՝ Կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի առք (տես՝ հավելված 1):
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել են համապատասխան համաձայնագրեր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի, բորսայի կամ երկկողմանի բանակցությունների միջոցով:
- Գործարքի առարկա կարող են հանդիսանալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված պարտատոմսեր:
- Գործարքի կնքման համար անցկացվող աճուրդի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, հայտերի ընդունման վերջնաժամկետը, պարտատոմսի տեսակը, և/կամ պարտատոմսերի գրանցման համարը, և/կամ գնվող պարտատոմսերի տոկոսադրույքը, և/կամ ժամկետայնությունը կամ ժամկետայնության սահմանափակման բացակայությունը:
- Կենտրոնական բանկի կողմից ներարկվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ Բանկերի կողմից աճուրդին ներկայացված ծավալը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի ավելացմանը:

3.3 Պարտատոմսերի վաճառք

- Պարտատոմսերի վաճառք՝ Կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի վաճառք (տես՝ հավելված 1):
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել են համապատասխան համաձայնագրեր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի, բորսայի կամ երկկողմանի բանակցությունների միջոցով:
- Գործարքի առարկա կարող են հանդիսանալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված պարտատոմսեր:
- Գործարքի կնքման համար անցկացվող աճուրդի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, հայտերի ընդունման վերջնաժամկետը, պարտատոմսի տեսակը, և/կամ պարտատոմսերի գրանցման համարը, և/կամ վաճառվող պարտատոմսերի տոկոսադրույքը, և/կամ ժամկետայնությունը կամ ժամկետայնության սահմանափակման բացակայությունը:

- Կենտրոնական բանկի կողմից ներքաշվող դրամի ծավալը մտապահվում է: Այն դեպքում, երբ բանկերի կողմից աճուրդին ներկայացված ծավալը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի կրճատմանը:

3.4 Կենտրոնական բանկի պարտատոմսերի թողարկում

- Կենտրոնական բանկի պարտատոմսերի թողարկում՝ Կենտրոնական բանկի կողմից կարճաժամկետ զեղչատոկոսային պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում: (տես՝ հավելված 2):
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի միջոցով:
- Կենտրոնական բանկի կողմից թողարկվում է որպես կանոն 91 և 182 օր մարման ժամկետով պարտատոմսեր:
- Գործարքի կնքման համար անցկացվող ստանդարտ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական պայմանները՝ թողարկման հերթական համարը, օրը և ժամը, թողարկման ծավալը, մարման օրը, պարտատոմսի ձեռք բերման առաջարկության նվազագույն ծավալը, քայլը:
- Այն դեպքում, երբ Բանկերի կողմից աճուրդին ներկայացված ծավալը գերազանցում է Կենտրոնական բանկի կողմից թողարկված ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի կրճատմանը:

3.5 Արտարժույթի առք

- Արտարժույթի առք՝ Կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում արտարժույթի առք:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել են համապատասխան համաձայնագրեր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի, բորսայի կամ երկկողմանի բանակցությունների միջոցով:
- Գործարքի կնքման համար անցկացվող արագ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական

պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի առքի ուղենշային ծավալը կամ փոխարժեքը, հայտերի ընդունման վերջնաժամկետը: Հայտարարվող փոխարժեքով տենդերի անցկացման պարագայում արտարժույթի առքի ծավալը մտապահվում է:

- Հայտարարվող ծավալով տենդերի անցկացման պարագայում Բանկերի կողմից ներկայացված հայտերը բավարարվում են այդ ծավալի շրջանակներում: Եթե բանկերի կողմից ներկայացված առաջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի կողմից գնվող արտարժույթի ծավալը, հայտարարված ուղենշային ծավալի շրջանակներում բավարարվում են առավել ցածր փոխարժեքով ներկայացված հայտերը, ընդ որում, առքի ծավալը ուղենշային ծավալին համապատասխանեցնելու նպատակով հնարավոր է ներկայացված հայտերի մասնակի բավարարում:
- Հայտարարվող փոխարժեքով տենդերի անցկացման պարագայում հայտերը բավարարվում են մտապահված ծավալի շրջանակներում, իսկ այն դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված առաջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Բորսայում արտարժույթի առքն իրականացվում է բորսայում արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները կարգավորող կանոններին համապատասխան:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի ավելացմանը:

3.6 Արտարժույթի վաճառք

- Արտարժույթի վաճառք՝ Կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում արտարժույթի վաճառք:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել են համապատասխան համաձայնագրեր:
- Գործարքն իրականացվում է աճուրդի, բորսայի կամ երկկողմանի բանակցությունների միջոցով:
- Գործարքի կնքման համար անցկացվող արագ տենդերի վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունում նշվում են գործարքի հիմնական պայմանները՝ համարը, տիպը, կնքման օրը, կատարման օրը, Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի վաճառքի ուղենշային ծավալը կամ փոխարժեքը, հայտերի ընդունման վերջնաժամկետը: Հայտարարվող փոխարժեքով տենդերի անցկացման պարագայում արտարժույթի վաճառքի ծավալը մտապահվում է:
- Հայտարարվող ծավալով տենդերի անցկացման պարագայում Բանկերի կողմից ներկայացված հայտերը բավարարվում են այդ ծավալի շրջանակներում: Եթե ներկայացված պահանջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի կողմից վաճառվող արտարժույթի ծավալը, հայտարարված ուղենշային ծավալի շրջանակներում բավարարվում են առավել բարձր փոխարժեքով ներկայացված հայտերը, ընդ որում, առքի ծավալը ուղենշային ծավալին

համապատասխանեցնելու նպատակով հնարավոր է ներկայացված հայտերի մասնակի բավարարում:

- Հայտարարվող փոխարժեքով տենդերի անցկացման պարագայում հայտերը բավարարվում են մտապահված ծավալի շրջանակներում, իսկ այն դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված պահանջարկը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն կարող է բավարարվել մասնակի:
- Բորսայում արտարժույթի վաճառքն իրականացվում է բորսայում արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները կարգավորող կանոններին համապատասխան:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի կրճատմանը:

4. Մշտական հնարավորության գործիքներ

4.1 Լոմբարդային Ռեպո

- Լոմբարդային Ռեպո՝ գործարք, որով Բանկը Կենտրոնական բանկին շուկայական գնով (տես՝ հավելված 1) վաճառում է պարտատոմսեր՝ գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ Կենտրոնական բանկը սեփականության իրավունքով ձեռք է բերում պարտատոմսեր՝ մարման օրը դրանք հետ վաճառելու պարտավորությամբ:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել են համապատասխան համաձայնագրեր:
- Գործարքի առարկա կարող են հանդիսանալ Կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված պարտատոմսեր:
- Բանկի կողմից ներկայացված Լոմբարդային Ռեպո գործարք կնքելու ցանկացած առաջարկություն բավարարվում է անվերապահորեն:
- Լոմբարդային Ռեպո գործարք կնքվում է 1 օր ժամկետով:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի ավելացմանը:

4.2 Դրամական միջոցների ներգրավում

- Դրամական միջոցների ներգրավման գործիք՝ Կենտրոնական բանկի կողմից Բանկից դրամական միջոցների ներգրավում:
- Գործարքն իրականացվում է այն Բանկերի հետ, որոնց հետ կնքվել են համապատասխան համաձայնագրեր:
- Բանկի կողմից Կենտրոնական բանկում դրամական միջոցների ներդնելու ցանկացած առաջարկություն բավարարվում է անվերապահորեն:
- Դրամական միջոցները ներգրավվում են 1 օր ժամկետով:
- Գործիքի կիրառումը հանգեցնում է իրացվելիության մակարդակի կրճատմանը:

Դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառման մեխանիզմները

Հիմնական վերաֆինանսավորման և կառուցվածքային գործիքների աճուրդները, բացառությամբ պարտատոմսերի և արտարժույթի առք ու վաճառքի աճուրդների, Կենտրոնական բանկի կողմից իրականացվում են ստանդարտ տենդերի միջոցով: Ստանդարտ տենդերը ենթադրում է անցկացման նախապես հայտնի ժամկետներ կամ պարբերականություն, ինչպես նաև տենդերի անցկացման վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և անցկացման պահերի միջև բավականաչափ երկար, ֆիքսված ժամանակահատվածի սահմանում, ինչը մեծացնում է շուկայի մասնակիցների կողմից որոշումների ընդունման ազատության աստիճանը:

Ճշգրտող գործիքների, ինչպես նաև արտարժույթի առք ու վաճառքի աճուրդները իրականացվում են արագ տենդերի միջոցով: Արագ տենդերը ենթադրում է գործարքների իրականացում, ըստ ի հայտ եկած անհրաժեշտության՝ հնարավորինս սեղմ ժամկետներում:

Մշտական հնարավորության գործիքները իրականացվում են երկկողմանի գործարքներ կնքելու միջոցով:

Դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառման շրջանակներում բորսայում Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունները կանոնակարգվում են բորսայի կանոններով:

Երկկողմանի գործարքները կնքվում են բանակցությունների միջոցով և կարգավորվում են Կենտրոնական բանկի և Բանկերի միջև գործող համապատասխան պայմանագրերով և համաձայնագրերով (տես՝ հավելված 4):

Դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառման շրջանակներում Կենտրոնական բանկի և Բանկերի միջև կնքվող գործարքների ընթացակարգերը, գործարքների կնքման համար Բանկերի կողմից ներկայացվող հայտերի և Կենտրոնական բանկի հաստատումների ու մերժումների ձևերը սահմանվում են Կենտրոնական բանկի կողմից, ինչպես նաև Կենտրոնական բանկի և Բանկերի միջև գործող համապատասխան պայմանագրերով և համաձայնագրերով:

Իրականացվելիք գործարքների վերաբերյալ Կենտրոնական բանկի հայտարարությունները փոխանցվում են «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով, ինչպես նաև կարող են տեղադրվել Կենտրոնական բանկի տնային էջում: Այն դեպքում, երբ «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով հայտարարությունների և հաղորդագրությունների ուղարկումն անհնար է, Կենտրոնական բանկի հայտարարությունները կարող են փոխանցվել հեռախոսակապի, ֆաքսիմիլային կամ ՍՎԻՖՏ կապերի միջոցով:

Դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառման շրջանակներում Կենտրոնական բանկի կողմից աճուրդների իրականացման դեպքում, երբ Բանկերի կողմից ներկայացված ծավալը գերազանցում է Կենտրոնական բանկի մտապահած ծավալը, այն՝

- ֆիքսված աճուրդի դեպքում, բավարարվում է համամասնորեն ըստ ներկայացված առաջարկությունների կշիռների
- տատանվող աճուրդի դեպքում՝ ամենաբարձր (ամենացածր) տոկոսադրույքով (եկամտաբերությամբ) առաջարկություններից սկսած մինչև մտապահված ծավալի լրանալը: Եթե սահմանային տոկոսադրույքով (եկամտաբերությամբ) բավարարման ենթակա առաջարկությունների ծավալը զիջում է տվյալ տոկոսադրույքով (եկամտաբերությամբ) առաջարկությունների ծավալը, կատարվում է ըստ սահմանային տոկոսադրույքով (եկամտաբերությամբ) ներկայացված առաջարկությունների կշիռների համամասնական բավարարում, հակառակ դեպքում բավարարվում է տվյալ սահմանային տոկոսադրույքով (եկամտաբերությամբ) առաջարկությունների ողջ ծավալը:

Ստանդարտ տենդեր

Հիմնական վերաֆինանսավորման և կառուցվածքային (բացառությամբ պարտատոմսերի և արտարժույթի առք ու վաճառքի) գործիքների աճուրդները Կենտրոնական բանկի կողմից իրականացվում են ստանդարտ տենդերի միջոցով (տես՝ հավելված 5, գծապատկեր 1, 2): Կենտրոնական բանկի կողմից ստանդարտ տենդերի անցկացման դեպքում Կենտրոնական բանկը մինչև գործարքի կնքմանը նախորդող աշխատանքային օրվա ժամը 17:00 հայտարարում է գործարքի յուրաքանչյուր տեսակի համար սույն կանոններով նախատեսված պայմանները:

Հիմնական և կառուցվածքային (բացառությամբ պարտատոմսերի և արտարժույթի առք ու վաճառքի) գործիքների աճուրդներին մասնակցելու նպատակով Բանկերը Կենտրոնական բանկ են ներկայացնում համապատասխան հայտ (հայտեր)՝ հայտարարման ժամից մինչև գործարքի կնքման օրվա ժամը 10:00-ը: Կենտրոնական բանկն ամփոփում է ներկայացված հայտերը և դրանք բավարարելու (մասնակի բավարարելու) կամ մերժելու մասին Բանկերին տեղեկացնում է մինչև գործարքի կնքման օրվա ժամը 12:00-ը:

Կենտրոնական բանկի պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով անցկացվող ստանդարտ տենդերի դեպքում Բանկերը Կենտրոնական բանկ են ներկայացնում համապատասխան հայտ (հայտեր)՝ գործարքի կնքմանը նախորդող աշխատանքային օրվա ժամը 17:00-ից մինչև գործարքի կնքման օրվա ժամը 11:00-ը: Կենտրոնական բանկն ամփոփում է ներկայացված հայտերը և դրանք բավարարելու (մասնակի բավարարելու) կամ մերժելու մասին Բանկերին տեղեկացնում է մինչև գործարքի կնքման օրվա ժամը 13:00-ը:

Արագ տենդեր

Ճշգրտող գործիքների, ինչպես նաև արտարժույթի առք ու վաճառքի աճուրդները Կենտրոնական բանկի կողմից իրականացվում են արագ տենդերի միջոցով՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված գործառնական օրվա ցանկացած պահին (տես՝ հավելված 5, գծապատկեր 3): Կենտրոնական բանկի կողմից ճշգրտող գործիքների կիրառման նպատակով արագ տենդերի անցկացման դեպքում Կենտրոնական բանկը գործարքի հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 1.5 ժամ առաջ հայտարարում է գործարքի յուրաքանչյուր տեսակի համար սույն կանոններով նախատեսված պայմանները:

Ճշգրտող գործիքների, ինչպես նաև արտարժույթի առք ու վաճառքի աճուրդներին մասնակցելու նպատակով Բանկերը Կենտրոնական բանկ են ներկայացնում համապատասխան հայտ (հայտեր)՝ հայտարարման ժամից մինչև հայտերի ընդունման վերջնաժամկետը:

Կենտրոնական բանկն ամփոփում է ստացված հայտերը և Բանկերին տեղեկացնում հայտերի հաստատման, մասնակի հաստատման կամ մերժման մասին հայտարարությունում նշված հայտերի ընդունման վերջնաժամկետից առավելագույնը 2 ժամվա ընթացքում:

Մշտական հնարավորության գործիքների կնքման մեխանիզմը

Մշտական հնարավորության գործիքների կնքման համար Բանկերը Կենտրոնական բանկ հայտեր կարող են ներկայացնել մինչև գործարքի կնքման օրվա ժամը 16:00:

Լոմբարդային Ռեպո կնքելու նպատակով Կենտրոնական բանկ ներկայացված Բանկի առաջարկությունը բավարարվում է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում սույն փաստաթղթի և Բանկի ու Կենտրոնական բանկի միջև գործող համապատասխան համաձայնագրի պահանջներին: Նման դեպքերում հայտը մերժվում է ամբողջությամբ:

Դրամական միջոցներ ներդնելու Կենտրոնական բանկ ներկայացված բանկի առաջարկությունը բավարարվում է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում սույն փաստաթղթի և Բանկի ու Կենտրոնական բանկի միջև գործող համապատասխան համաձայնագրի պահանջներին: Նման դեպքերում հայտը մերժվում է ամբողջությամբ:

Լոմբարդային Ռեպո գործարքի կնքման դեպքում դրամական միջոցների և պարտատոմսերի փոխանցումները կատարվում են կնքման օրվա ժամը 16:30-ից մինչև 17:30-ը:

Կենտրոնական բանկն ներկայացված հայտերի մերժելու մասին Բանկերին տեղեկացնում է գործարքի կնքման օրվա մինչև ժամը 17:00-ը:

Լոմբարդային Ռեպո գործարքները մարվում են կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:30-ից մինչև 17:30:

Դրամական միջոցների ներգրավման գործարքները մարվում են կնքման օրվան հաջորդող Բանկային օրվա մինչև ժամը 10:00-ը:

Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների տոկոսադրույքներ

Կենտրոնական բանկի կողմից իրականացվող Լոմբարդային ռեպո և դրամական միջոցների ներգրավման գործարքների, ինչպես նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքները սահմանվում են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից համաձայն դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման ժամանակացույցի: Տոկոսադրույքները, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանվելուց հետո, հայտարարվում են մասնագիտացված կապի և զանգվածային լրատվության միջոցներով, որից հետո միայն հանդիսանում են Կենտրոնական բանկի գործարքների կնքման պայման:

Հիմնական վերաֆինանսավորման գործիքի իրականացման տոկոսադրույք կամ նվազագույն տոկոսադրույք է ընդունվում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

Ռեպո, հակադարձ ռեպո, երկարաժամկետ վերաֆինանսավորման, արտարժույթի տրամադրման և ներգրավման սվոփ, դրամական միջոցների ներգրավման սակարկություններով գործարքներն իրականացվում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված տոկոսադրույքներով: Տոկոսադրույքների որոշման համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում ձևավորված միտումները:

Պարտատոմսերի առք ու վաճառքի գործիքների եկամտաբերությունները սահմանվում են՝ առաջնորդվելով գործարքի կնքման նախորդ օրվա պետական պարտատոմսերի եկամտաբերության կորով:

Յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է կնքված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար՝ 1/366 հարաբերակցությամբ:

Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական շուկային անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում

Յուրաքանչյուր եռամսյակի սկզբին Կենտրոնական բանկի խորհուրդը հանդես կգա հայտարարությամբ՝ ներկայացնելով նախորդ եռամսյակում գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու համար Կենտրոնական բանկի գործողությունները, փաստացի և կանխատեսված գնաճների միջև շեղման (եթե առկա է) բացատրությունը, գնաճի հաջորդ եռամսյակի կանխատեսումները: Կիրառարակվի ինչպես հայտարարությունը, այնպես էլ «Գնաճի հաշվետվությունը»,

որը կամփոփի գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու համար Կենտրոնական բանկի գործողությունները: Յուրաքանչյուր ամիս Կենտրոնական բանկի խորհուրդը կհաստատի և կիրառարակի Կենտրոնական բանկի իրավիճակային հաշվետվությունը՝ գնաճի կառավարման գործընթացը ներկայացնելով ամսական կտրվածքով: Կարճաժամկետ դրամավարկային քաղաքականության ուղղություններն առավել հրապարակային դարձնելու նպատակով Կենտրոնական բանկը օրական կտրվածքով կիրառարակի նաև տեղեկատվություն ինչպես Կենտրոնական բանկի, այնպես էլ միջբանկային շուկայում բանկերի կողմից իրականացված գործառնությունների վերաբերյալ (տես՝ հավելված 6):

Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովմանն ուղղված դրամավարկային քաղաքականությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով Կենտրոնական բանկը կատարելագործելու է Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների հետ տեղեկատվության փոխանակման մեխանիզմները՝ պարզելու համար շուկայում իրականացվող գործառնությունների մոտիվացիան, իրացվելիության տնօրինման առկա ծրագրերը, սպասվելիք խոշոր վճարումներն ու նախատեսվող արժույթային փոխարկումները:

Հավելվածներ

Հավելված 1

Պարտատոմսերի գնման/վաճառքի գինը հաշվարկվում է.

ա) ՀՀ պետական կարճաժամկետ պարտատոմսերի համար՝

$$ԳԳ = \frac{ԱԱ}{1 + (ԵԿ * O) / 360}$$

որտեղ՝

ԳԳ - պարտատոմսի գնման/վաճառքի գինը

ԱԱ - պարտատոմսի անվանական արժեքը

O - մինչև մարումը մնացած փաստացի օրերի թիվը

ԵԿ — տոկոսադրույք, որը՝

- ռեպո, հակադարձ ռեպո և դրամական միջոցների տրամադրման գործարքների համար պարտատոմսերի գնման/վաճառքի գինը հաշվարկվում է Կենտրոնական բանկի կողմից «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցով կամ Կենտրոնական բանկի

տնային էջում տեղադրված օրական կտրվածքով տրամադրվող եկամտաբերության կորի հիման վրա

- պարտատոմսերի գնման և վաճառքի գնի հաշվարկման համար հիմք է ընդունվում պարտատոմսի առք և վաճառքի գործարքի համար հայտարարված տոկոսադրույքը

բ) ՀՀ պետական (գանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի և ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի համար՝

$$Q_1 Q_2 = \frac{U}{1 + \frac{a \cdot \text{եկ}}{100 \cdot b}} \cdot \left[\frac{un}{100} \cdot \sum_{j=1}^m \frac{1}{\left(1 + \frac{\text{եկ}}{100}\right)^{j-1}} + \frac{1}{\left(1 + \frac{\text{եկ}}{100}\right)^{m-1}} \right],$$

որտեղ՝ $Q_1 Q_2$ - պարտատոմսի գնման/վաճառքի գին

u - արժեկտրոնի փուլային եկամտաբերություն

U - պարտատոմսի անվանական արժեքը

a - մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվը

b - փուլի տևողությունը օրերով

m - այդ պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

եկ -փուլային եկամտաբերություն

որտեղ՝ $u = ((1+S/100)^{1/k} - 1) * 100$

$\text{եկ} = ((1+ԵԿ/100)^{1/k} - 1) * 100$

S - արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն

k - արժեկտրոնների վճարումների թիվը

$ԵԿ$ –տոկոսադրույք, որը՝

- ռեպո, հակադարձ ռեպո և դրամական միջոցների տրամադրման գործարքների համար պարտատոմսերի գնման/վաճառքի գինը հաշվարկվում է Կենտրոնական բանկի կողմից «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցով կամ Կենտրոնական բանկի տնային էջում տեղադրված օրական կտրվածքով տրամադրվող եկամտաբերության կորի հիման վրա
- պարտատոմսերի գնման և վաճառքի գնի հաշվարկման համար հիմք է ընդունվում պարտատոմսի առք և վաճառքի գործարքի համար հայտարարված տոկոսադրույքը

գ) ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի համար՝

$$ԳԳ = \frac{U}{m} * \sum_{j=1}^m \frac{(u^{*(m-j+1)} / 100) + 1}{(1 + \epsilon_k * a / (100 * b)) * (1 + \epsilon_k / 100)^{j-1}}$$

որտեղ՝ ԳԳ- պարտատոմսի գնման/վաճառքի գին
 տ - արժեկտրոնի փուլային եկամտաբերություն
 Ա- պարտատոմսի անվանական արժեքը
 b - տվյալ փուլի փաստացի տևողությունն օրերով
 a - մինչև առաջիկա մարում օրերի թիվը
 m- այդ պահին մնացած մասնակի մարումների (արժեկտրոնների վճարումների) թիվը
 եկ-փուլի եկամտաբերություն

որտեղ՝ $u = ((1 + S/100)^{1/k} - 1) * 100$
 $\epsilon_k = ((1 + \epsilon_k/100)^{1/k} - 1) * 100$
 S - արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն
 k - մեկ տարում մասնակի մարումների և արժեկտրոնների վճարումների թիվը
 ԵԿ –տոկոսադրույք, որը՝

- ռեպո, հակադարձ ռեպո և դրամական միջոցների տրամադրման գործարքների համար պարտատոմսերի գնման/վաճառքի գինը հաշվարկվում է Կենտրոնական բանկի կողմից «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցով կամ Կենտրոնական բանկի տնային էջում տեղադրված օրական կտրվածքով տրամադրվող եկամտաբերության կորի հիման վրա
- պարտատոմսերի գնման և վաճառքի գնի հաշվարկման համար հիմք է ընդունվում պարտատոմսի առք և վաճառքի գործարքի համար հայտարարված տոկոսադրույքը

Հավելված 2

Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է.

$$\epsilon = (((U - G) / G) * 360 / O) * 100\%$$

որտեղ՝ Ե- Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը
 ԱԱ-անվանական արժեք
 ԳԳ-գնման գին
 O-մինչև մարում մնացած փաստացի օրերի թիվը

Սվոփ տոկոսադրույթին համապատասխանող՝ Բանկի կամ Կենտրոնական բանկի կողմից վճարվող դրամային գումարը հաշվարկվում է.


$$\Sigma \text{AMD} = (\Sigma \text{USD} * \text{USD/AMD} * I_{\text{swap}} * T) / 100 * 365$$

բանձնով, որտեղ


ΣAMD - Բանկի կամ Կենտրոնական բանկի կողմից վճարվող դրամային գումարն է,
 ΣUSD – սվոփ գործարքի շրջանակներում Բանկի կողմից տրամադրվող կամ ներգրավվող ԱՄՆ դոլարի գումարն է,
 USD/AMD – գործարքի փոխարժեքն է,
 I_{swap} – սվոփ տոկոսադրույթն է,
 T – սվոփ գործարքի օրերի քանակն է:

Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ


Դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիք	Կիրառման նպատակը		Տոկոսադրույք (Տիպը)		Ժամկետայնություն	Հաճախականություն	Իրականացման կարգ	Գործընկեր
	Իրացվելիության ներարկում	Իրացվելիության կրճատում						
Հիմնական վերաֆինանսավորման գործիք	<ul style="list-style-type: none"> Ռեպո (հիմնական վերաֆինանսավորման գործիք) 		Ֆիքսված (վերաֆինանսավորման տոկոսադրույք)	Տատանվող (նվազագույնը վերաֆինանսավորման տոկոսադրույք)	7 օր	շաբաթական (չորեքշաբթի)	Ստանդարտ տենդեր	Բանկ
Ճշգրտող գործիքներ	<ul style="list-style-type: none"> Ռեպո 		Ֆիքսված	Տատանվող	մինչև 7 օր	ոչ կանոնավոր	Արագ տենդեր, Երկկողմանի	Բանկ
		<ul style="list-style-type: none"> Հակադարձ ռեպո 	Ֆիքսված	Տատանվող	մինչև 28 օր	ոչ կանոնավոր	Արագ տենդեր, Երկկողմանի	Բանկ
		<ul style="list-style-type: none"> Դրամական միջոցների ներգրավման սակարկություն 	Ֆիքսված	Տատանվող	մինչև 28 օր	ոչ կանոնավոր	Արագ տենդեր	Բանկ
	<ul style="list-style-type: none"> Արտարժույթի տրամադրման սվոփ 	<ul style="list-style-type: none"> Արտարժույթի ներգրավման սվոփ 	Ֆիքսված		մինչև 91 օր	ոչ կանոնավոր	Արագ տենդեր	Բանկ
Կառուցվածքային գործիքներ	<ul style="list-style-type: none"> Ռեպո (երկարաժամկետ վերաֆինանսավորման գործիք) 		Ֆիքսված	Տատանվող	մինչև 91 օր	ոչ կանոնավոր	Ստանդարտ տենդեր, Երկկողմանի	Բանկ
		<ul style="list-style-type: none"> ԿԲ-ի պարտատոմսերի թողարկում 	Տատանվող		91, 182 օր	ոչ կանոնավոր	Ստանդարտ տենդեր	Բանկ
	<ul style="list-style-type: none"> Պարտատոմսերի առք 	<ul style="list-style-type: none"> Պարտատոմսերի վաճառք 	Ֆիքսված	Տատանվող	—	ոչ կանոնավոր	Տենդեր, Երկկողմանի	Բանկ, Բորսա
	<ul style="list-style-type: none"> Արտարժույթի առք 	<ul style="list-style-type: none"> Արտարժույթի վաճառք 	—		—	ոչ կանոնավոր	Արագ տենդեր, Երկկողմանի	Բանկ, Բորսա
Մշտական հնարավորության գործիքներ	<ul style="list-style-type: none"> Լոմբարդային Ռեպո 		Ֆիքսված		1 օր	մշտական	Երկկողմանի	Բանկ
		<ul style="list-style-type: none"> Դրամական միջոցների ներգրավում 	Ֆիքսված		1 օր	մշտական	Երկկողմանի	Բանկ



Գծապատկեր 1. Ստանդարտ տեղերի ժամանակացույց



Գծապատկեր 2. Ստանդարտ տեղերի ժամանակացույց (<< ԿԲ պարտատոմսերի թողարկում)



Գծապատկեր 3. Արագ տեղերի ժամանակացույց

Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական շուկային տեղեկատվության տրամադրում

1. Ամեն օր, մինչև ժամը 10:30, «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով տրամադրվում է նախորդ օրվա՝ Կենտրոնական բանկի հաշվեկշռային փաստացի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ ակտիվային և պասիվային բաղադրամասերի (հավելված 6.1):
2. Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման ժամանակացույցի համապատասխան հաճախականությամբ մինչև ժամը 10:30 «Սի Բի Էյ Նեթ»-ի միջբանկային համակարգչային ցանցի միջոցով տրամադրվում է պարտադիր պահուստավորման միջոցների միջին մակարդակի վերաբերյալ տեղեկատվություն (հավելված 6.2):
3. Ամեն օր, մինչև ժամը 16:30, «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով կամ Կենտրոնական բանկի տնային էջում տրամադրվում է ՀՀ արժութային շուկայի մասնակիցների կողմից իրականացված տվյալ օրվա գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն (հավելված 6.3):
4. Ամեն օր, մինչև ժամը 10:30, «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով տրամադրվում է T-1 ժամանակահատվածի համար (T-ն՝ տվյալ օրը) Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային և ռեպո շուկաներում ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցների միջև իրականացված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն (հավելվածներ 6.4, 6.5 և 6.6):
5. Ամեն օր, մինչև ժամը 16:30, «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով տրամադրվում է պարտատոմսերի եկամտաբերության կորի վերաբերյալ տեղեկատվություն (հավելված 6.7):
6. Յուրաքանչյուր դրամավարկային քաղաքականության գործիքի իրականացումից հետո երկու ժամվա ընթացքում «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով կամ Կենտրոնական բանկի տնային էջում տրամադրվում է տվյալ օրվա Կենտրոնական բանկի և Բանկերի միջև արժութային և դրամային շուկաներում գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն (հավելված 6.8):
7. Ամեն երկուշաբթի մինչև ժամը 11:30, «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով տրամադրվում է նախորդ շաբաթվա ՀՀ ֆինանսական շուկայի և ֆինանսական շուկայում իրականացված գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվություններ (հավելված 6.9 և 6.10):

8. Յուրաքանչյուր երկուշաբթի, մինչև ժամը 10:30, «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով տրամադրվում է նախորդ շաբաթվա ընթացքում Կենտրոնական բանկի կողմից բորսայում իրականացված արժույթային գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն (հավելված 6.11):
9. Ամեն օր, մինչև ժամը 16:30, «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի միջոցով տրամադրվում է T+1 ժամանակահատվածի համար Կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների թողարկած պարտատոմսերի ընթացիկ գինը (հավելված 6.12):

Հավելված 6.1

ՀՀ ԿԲ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇՈՒՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ACCOUNTS OF THE CENTRAL BANK OF ARMENIA

(մլն. ՀՀ դրամ)

	Ամսաթիվ	Ամսաթիվ	Ամսաթիվ
Զուտ միջազգային պահուստներ (ՉՄՊ) (NIR) *			
ԶՆԱ (NDA)			
Կառավարություն (General Government)			
Բանկեր(Banks)			
այդ թվում՝ ՌԵՊՈ համաձայնագիր, այդ թվում՝			
ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման ՍՎՈՓ (o/w Currency SWAP)			
Դրամական միջոցների ներգրավում (o/w Deposits) (-)			
Հակադարձ ՌԵՊՈ (o/w Reverse REPO) (-)			
ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման ՍՎՈՓ (-) (o/w Currency SWAP)			
ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (securities issued by CBA)			
Այլ ակտիվներ,զուտ(Other Items,Net)			
ՓՈՂԻ ԲԱԶԱ (MONETARY BASE)			
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ(Currency outside CBA)			
Պարտ. պահուստ.(դրամով.) (RR AMD)			
Պարտ. պահուստ.(արտարժ.) (RR FX)			
Այլ հաշիվներ (Other Accounts)			
Այլ հաշիվներ (դրամով) (Other Accounts)			
Այլ հաշիվներ (արտարժույթով) (Other Accounts)			
Փ Ո Փ Ո Խ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր (նախորդ ժամանակահատվածի նկատմամբ) FLOWS (with respect to end of previous period)			
Զուտ միջազգային պահուստներ (ՉՄՊ) (NIR) *			
ԶՆԱ (NDA)			
Կառավարություն (General Government)			
Բանկեր(Banks)			
այդ թվում՝ ՌԵՊՈ համաձայնագիր			
ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման ՍՎՈՓ (o/w Currency SWAP)			
Դրամական միջոցների ներգրավում (o/w Deposits) (-)			
Հակադարձ ՌԵՊՈ (o/w Reverse REPO) (-)			
ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման ՍՎՈՓ (-) (o/w Currency SWAP)			
ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-) (securities issued by CBA)			
Այլ ակտիվներ,զուտ(Other Items,Net)			
ՓՈՂԻ ԲԱԶԱ (MONETARY BASE)			
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ(Currency outside CBA)			
Պարտ. պահուստ.(դրամով.) (RR AMD)			
Պարտ. պահուստ.(արտարժ.) (RR FX)			
Այլ հաշիվներ (Other Accounts)			
Այլ հաշիվներ (դրամով) (Other Accounts)			
Այլ հաշիվներ (արտարժ. (Other Accounts)			

Հավելված 6.3

(ամսաթիվ)

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

/ԱՄՆ դոլար/

	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ	ՄԻՋ. ՓՈՒՍԱՐԺԵՔ /դրամ/
ՄԻՋՔԱՆԿ			
Բոլսա			
ՆԵՐՔԱՆԿ			
ԸՆԴԱՄԵՆԸ			

Հավելված 6.4

(ամսաթիվ)

Պետական (գանձապետական) պարտավորումների երկրորդային շուկայի շրջանառությունը

	Ժամկետայնություն /դյուրացիա/						Ընդամենը
	մինչև 6 ամիս	6 ամսից – 1 տարի	1-2 տարի	2-5 տարի	5-7 տարի	7 տարի և ավել	
Ծավալ /դրամ/							
Այդ թվում ՀՀ ԿԲ՝							
որից՝ ՀՀ ԿԲ առք							
ՀՀ ԿԲ վաճառք							
Եկամտաբերություն							
Միջին							
Առավելագույն							
Նվազագույն							
Ստանդարտ շեղում							
Գործարքների քանակը							

Հավելված 6.5

(ամսաթիվ)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պետական պարտավորումների
երկրորդային շուկայի շրջանառությունը




	Ժամկետայնություն /ըյուրացիա/				Ընդամենը
	մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-9 ամիս	9 ամսից-1 տարի	
Ծավալ /դրամ/					
Եկամտաբերություն					
Միջին					
Առավելագույն					
Նվազագույն					
Ստանդարտ շեղում					
Գործարքների քանակը					

Հավելված 6.6

(ամսաթիվ)
ՌԵՊՈ ՇՈՒԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

	Ժամկետայնություն /օր/				Ընդամենը
	1-7 օր	8-14 օր	15-28 օր	29 օր և ավել	
Ծավալ /դրամ/ անվանական արժեքով					
Այդ թվում ՀՀ ԿԲ՝					
Եկամտաբերություն					
Միջին					
Առավելագույն					
Նվազագույն					
Ստանդարտ շեղում					
Գործարքների քանակը					

Հավելված 6.7



Պարտատոմսի շրջանառության ժամկետը	ՍՓՈԹ	ՍՓՈԹ	ՖՈՐՎԱՐԴ	ՖՈՐՎԱՐԴ	Մինչև մարում եկամտ.	Մինչև մարում եկամտ.
6 ամիս						
1 տարի						
2 տարի						
5 տարի						
7 տարի						
10 տարի						

Հավելված 6.8

Տեղեկատվություն ՀՀ ԿԲ կողմից իրականացված գործառնությունների վերաբերյալ

Համարը / (Պարտատոմսի թողարկման համարը)	
Տեսակը	
Նպատակը	
Իրականացման կարգը	
Տիպը	
Կնքման ամսաթիվը	
Կատարման ամսաթիվը / (1-ին քայլ)	
Մարման ամսաթիվը / (2-րդ քայլ)	
Ժամկետայնությունը / (օր)	
Մասնակիցների թիվը	
Ներկայացված առաջարկությունների ծավալը	
Բավարարված առաջարկությունների ծավալը	
Սահմանային տոկոսադրույքով բավարարված առաջարկությունների դրույքաչափ (%)	
Սահմանային տոկոսադրույք (եկամտաբերություն)	
Միջին կշռված տոկոսադրույք (եկամտաբերություն) / (սվփ տոկոսադրույք)	
Ներկայացված առաջարկությունների նվազագույն տոկոսադրույք (եկամտաբերություն)	
Ներկայացված առաջարկությունների առավելագույն տոկոսադրույք (եկամտաբերություն)	
Սփոթ փոխարժեք	
Արտարժույթի ISO կոդը	

որտեղ՝

- **Մասնակիցների թիվ**՝ աճուրդի ամփոփման գործընթացում մասնակցություն ունեցողների թվաքանակը.
- **Ներկայացված առաջարկությունների ծավալ**՝ աճուրդի ամփոփման գործընթացում ներկայացված առաջարկությունների հանրագումար
- **Բավարարված առաջարկությունների ծավալ**՝ աճուրդի ամփոփման գործընթացում բավարարված առաջարկությունների հանրագումար
- **Սահմանային տոկոսադրույքով բավարարված առաջարկությունների դրույքաչափ (%)**՝ սահմանային տոկոսադրույքով բավարարված և սահմանային տոկոսադրույքով ներկայացված առաջարկությունների տոկոսային հարաբերակցությունը, որը կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճտությամբ
- **Սահմանային տոկոսադրույք (եկամտաբերություն)**՝ տատանվող տոկոսադրույքով աճուրդի ամփոփման գործընթացում Կենտրոնական բանկի կողմից որոշվող տոկոսադրույքի (եկամտաբերության) չափ, որը իրացվելիություն ներարկող գործիքների դեպքում հանդիսանում է բավարարված առաջարկությունների նվազագույն տոկոսադրույքը, իսկ իրացվելիություն կրճատող գործիքների դեպքում՝ բավարարված առաջարկությունների առավելագույն տոկոսադրույքը: Ֆիքսված տոկոսադրույքով աճուրդի պարագայում սահմանային տոկոսադրույքը համընկնում է գործարքի տոկոսադրույքի հետ.
- **Միջին կշռված տոկոսադրույք (եկամտաբերություն)**՝ բավարարված առաջարկությունների միջին կշռված տոկոսադրույք (եկամտաբերություն), որտեղ կշիռները ներկայացնում են բավարարված առաջարկությունները.
- **Ներկայացված առաջարկությունների նվազագույն տոկոսադրույք (եկամտաբերություն)**՝ աճուրդի ամփոփման գործընթացում ներկայացրած առաջարկությունների նվազագույն տոկոսադրույքը (եկամտաբերությունը)
- **Ներկայացված առաջարկությունների առավելագույն տոկոսադրույք (եկամտաբերություն)**՝ աճուրդի ամփոփման գործընթացում ներկայացրած առաջարկությունների առավելագույն տոկոսադրույքը (եկամտաբերությունը)

Հավելված 6.9 ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱ

Պետական պարտատոմսեր		
Առաջնային տեղաբաշխում		
թողարկում *		
թողարկման ծավալ (դրամ)		
պահանջարկ (դրամ)		
տեղաբաշխված ծավալ (դրամ)		
ժամկետայնությունը (օր)		
Տոկոս (սահմանային)		
Եկամտաբերություն		
արժեկտրոն		
Երկրորդային շուկա	Ծավալ (մլն դրամ)	Եկամտաբերություն
ՊՊ ՊՊ առք / վաճառք		
մինչև 1 տարի		
1 - ից 2 տարի		
2 - ից 5 տարի		
5- տարի և ավել		
Ռեպո		
մինչև 7 օր		
8 - ից 14 օր		
15 - ից 28 օր		
29 - օր և ավել		
Արտարժույթային շուկա	Ծավալ(ԱՄՆ դոլար)	Փոխարժեք
ԱՌՔ		
Միջբանկային գործառնություններ		
Ներբանկային գործառնություններ		
Բորսայական գործառնություններ		
ԸնդԸնդամենը/ միջին		
ՎԱՃԱՌՔ		
Միջբանկային գործառնություններ		
Ներբանկային գործառնություններ		
Բորսայական գործառնություններ		
Ընդամենը/ միջին		
ՀՀ ԿԲ գործառնություններ	Ծավալ	%դրույքը/փոխարժեքը/

Կնքված Լոմբարդային ռեպո-համաձայնագրեր		
Մարված Լոմբարդային ռեպո-համաձայնագրեր		
Կնքված ռեպո-համաձայնագրեր		
Մարված ռեպո-համաձայնագրեր		
Կնքված հակադ. ռեպո-համաձայնագրեր		
Մարված հակադ. ռեպո-համաձայնագրեր		
Արտարժույթի ներգրավման սվոփ		
Արտարժույթի ներգրավման սվոփի մարում		
Գնված արտարժույթ (USD)		
որից բորսայում		
Վաճառված արտարժույթ (USD)		
որից բորսայում		
Երկրորդային շուկայում ՊՊ առք		
Երկրորդային շուկայում ՊՊ վաճառք		
Ներգրավված միջոցներ		
Ներգրավված միջոցների մարում		

** AMCB- ՀՀ ՀԲ կողմից թողարկված արժեթղթեր, AMGT, AMGM, AMGN, AMGB- ՀՀ ՖՆ կողմից թողարկված արժեթղթեր*

Հավելված 6.10

Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայի տոկոսադրույքները

ԳՈՐԾԻՔՆԵՐ			
ՀՀ ԿԲ տոկոսադրույքներ			
ՊՊ առք / վաճառք			
Ռեպո			
Մշտական հնարավորություններ			
Լոմբարդային ռեպո			
դրամական միջոցների ներգրավում			
Պետական պարտատոմսեր			
առաջնային տեղաբաշխում			
մինչև 1 տարի			
1 - ից 3 տարի			
3 - ից 5 տարի			
5 տարի և ավել			
Երկրորդային շուկա			
ՊՊ առք / վաճառք			
մինչև 1 տարի			
1 - ից 2 տարի			
2 - ից 5 տարի			
5 տարի և ավելի			

Ռեպո (ժամանակաշրջանի միջին)			
մինչև 7 օր			
7 - ից 14 օր			
14 - ից 28 օր			
28 - օր և ավել			
Ռեպո (ժամանակաշրջանի վերջ)			
Տեղաբաշխված միջոցներ*			
մինչև 15 օր			
15 - ից 30 օր			
30 - ից 60 օր			
60 - ից ավել			
Ներգրաված միջոցներ*			
մինչև 15 օր			
15 - ից 30 օր			
30 - ից 60 օր			
60 - ից ավել			
Քանկային տրուս. հաշվարկային դրույք			

* Միայն միջբանկային ՀՀ դրամով գործարքների տոկոսադրույքները

Հավելված 6.11

ՀՀ ԿԲ կողմից բորսայում իրականացրած արժույթային գործառնությունները

ԱՐՏԱՐԺՈՒՅԹ	ԱՌՔ	ՓՈՒՍԱՐԺԵՔ /դրամ/	ՎԱՃԱՌՔ	ՓՈՒՍԱՐԺԵՔ /դրամ/	ՄԻՋ. ՓՈՒՍԱՐԺԵՔ /դրամ/

Հավելված 6.12

ՀՀ կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների թողարկած պարտատոմսերի ընթացիկ գները
(ամսաթիվ)

Թողարկողի անվանումը	Թողարկման համարը	Բորսայակա ն գրանցման համարը	Թողարկման ամսաթիվը	Մարման ամսաթիվը	Մեկ արժեթղթի		Եկամտաբե րություն (%)
					Անվանական արժեքը	Գինը	